

ԿԱՐՇԻՔ

Միրանուշ Էդուարդի Կեսոյանի՝ «Ներակայումը արդի հայերենում» Ժ02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Բանասիրության բնագավառում ներակայում հասկացությունը առանցքային նշանակություն ունի, հատկապես երբ խոսքը վերաբերում է տարբեր լեզուներով մշակութային համատեքստերի մեկնաբանությանը: Ներակայումն ըստ այդմ վերաբերում է իմաստային այն շերտերին, որոնք հստակորեն և ուղղակիորեն չեն ասվում, բայց ներառված են լեզվական կառույցներում, գրական տեքստերում և մշակութային խորհրդանիշներում: Որպես բանասիրության ոլորտի ուսումնասիրության առարկա՝ այն անդրադառնում է նրան, թե ինչպես են իմաստները փոխանցվում անուղղակիորեն՝ դրդելով ընթերցողին կամ հետազոտողին եզրակացնել տեքստի հիմքում ընկած ուղերձները, արժեքները կամ ենթատեքստերը:

Միրանուշ Կեսոյանի ատենախոսության թեման նվիրված է բանասիրության բնագավառի հիմնարար խնդիրներից մեկի՝ ներակայում հասկացության համապարփակ քննությանը: Ուսումնասիրության հիմքում ներակայումն է՝ լեզվի բոլոր մակարդակներում և խոսքում ունեցած իր բազմազան դրսևորումներով, ասույթի մեկնաբանության և ըմբռնման գործում ցուցաբերած բարդ դերով:

Պետք է նշել, որ հայ լեզվաբանության մեջ տարբեր հետազոտողներ այս կամ այն կերպ քննել են ներակայումը հայերենում, սակայն դրանք եղել են մասնավոր հարցեր: Ուշագրավ է, որ ատենախոսության հեղինակը ուսումնասիրում է ներակայումը արդի հայերենի տարբեր մակարդակներում, այն քննում որպես և՛ լեզվական, և՛ խոսքային երևույթ, ներկայացնում դրա դրսևորման առանձնահատկությունները զուգահեռաբար արևմտահայերենում և արևելահայերենում:

Ատենախոսության կառուցվածքը տրամաբանորեն հիմնավորված է. բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, ունի օգտագործված գրականության և համառոտագրությունների ցանկեր:

Ներածության մեջ քննվում է ներակայում հասկացության սլատմական զարգացումը, անդրադարձ է կատարվում ներակայման շուրջ եղած տարակարծություններին: Սահմանվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, ներկայացվում է հարցի ուսումնասիրվածության աստիճանը: Աշխատանքի արժանիքներից են տրամաբանական ներակայման և լեզվաբանական ներակայման հստակ սահմանազատումը (գիտական որոշ աղբյուրներում դրանց սահմանները հստակ չեն), կանխենթադրույթների, ենթատեքստի և ներակայման ընդհանրական ու տարբերակիչ բնութագրիչների քննությունը, որոնք հանգամանալից ներկայացվում են աշխատանքի այս բաժնում:

Աշխատանքի հաջորդող երկու գլուխներում ատենախոսը քննում է ներակայումը բառային և քերականական մակարդակներում: Չնայած հայ լեզվաբանության մեջ բառային մակարդակում ներակայումը դիտարկվել է տարբեր հետազոտողների կողմից, բայց որպես ամբողջական և համապարփակ հետազոտություն, որը հիմնված է նաև հայերեն նյութի վրա, սույն գլուխը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Կարևոր է, որ աշխատանքում տեսական նյութի քննությունը զուգորդվում է վերլուծական նյութով: Ատենախոսն իր առջև խնդիր է դրել ներկայացնելու բառակազմական այն կառույցները, որոնց կազմությանը մասնակցում է ներակայումը, քննելու բառային միավորներով փոխանցվող ներակա տեղեկույթը, ներակայորեն ընկալվող ձևաբանական կարգերի նշանակությունները:

Առանձնահատուկ կարևորություն է տալիս աշխատանքին ներիմաստի տեսակների, հատկապես չկանխամտածված ներիմաստի առաջացման պատճառների և հանգամանքների քննությունը, որը ներկայացվում է երրորդ գլխում: Շուրջ քառասուն անուն գեղարվեստական գրականությունից, տպագիր մամուլից և լրատվական կայքէջերից քաղված օրինակները լիարժեքորեն լրացնում

են հեղինակային դիտարկումները և ամբողջացնում տարրեր հանգամանքներով պայմանավորված ներիմաստի դրսևորումները:

Ատենախոսության մեջ արձարծված հետազոտական խնդիրները ուղղակիորեն բխում են առաջադրված նպատակից: Այն, որ ատենախոսը քաջածանոթ է հետազոտության ոլորտին և կատարել է ինքնուրույն և անկախ վերլուծություն, վկայում են աշխատանքի երեք գլուխներում քննված դրույթները: Ոլորտում հիմնարար տեսական գրականության վերլուծությունից բացի՝ հեղինակն իր փաստարկներն ամրապնդում է անձնական դիտարկումներով՝ ավելի հիմնավորելով իր եզրակացությունները: Ներկայացված օրինակների վերլուծությունը ընդգծում է ատենախոսության ինքնատիպությունը և հեղինակի ինքնուրույն մոտեցումը:

Ընդունելով հանդերձ, որ ներկայացված աշխատանքը արժեքավոր է, նշենք, սակայն, որ աշխատանքը զերծ չէ որոշ ոչ ճշգրիտ ձևակերպումներից և թերացումներից: Բացի այդ՝ հետագայում աշխատանքն ավելի կատարյալ տեսնելու համար նշենք որոշ առաջարկություններ և դիտարկումներ:

1. Այսպես, տրամաբանական ներակայում հասկացությունը լեզվաբանության մեջ քննելու առաջին փորձերը կատարել է բրիտանացի լեզվաբան, փիլիսոփա Հերբերտ Փոլ Գրայսն իր «Logic and Conversation» աշխատության մեջ: Գրայսը ասպարեզ բերեց *իմպլիկատորա* հասկացությունը՝ որպես պրագմատիկայի կարևոր հասկացություն, և լեզվում ներակա իմաստների արտահայտության իր տեսությամբ ոչ միայն ապահովեց իր դիրքը որպես պրագմատիկայի ոլորտի տեսաբան, այլև ոգեշնչեց բազմաթիվ այլ փիլիսոփաների ու լեզվաբանների: Եվ պատահական չէ, որ գիտության մեջ սկսեցին առանձնացվել գրայսական պրագմատիկա և նեոգրայսական պրագմատիկա հասկացությունները: Ատենախոսության մեջ փոքրիկ անդրադարձ կա Գրայսի՝ վերը նշված տեսությանը, բայց ավելի ճշգրիտ կլիներ, որ Գրայսը ներկայացվեր որպես առաջին տեսաբաններից մեկը, որը տրամաբանական կարգերը բերեց լեզվաբանության ոլորտ, քննվեր ներակա իմաստի լեզվական արտահայտության

պատմական ուղին գրայտական և նեոգրայտական պրագմատիկայի տեսանկյունից:

2. Առհասարակ ներակայումը վերաբերում է ավելի խորը իմաստներին, որոնք ուղղակիորեն չեն ասվում, բայց ներդրված են լեզվական ձևերի, գրական միջոցների, ինչպես նաև մշակութային գործոնների մեջ: Ատենախոսության տարբեր էջերում (էջ 76, 79, 92, 105) մակերեսային անդրադարձ է կատարվում ֆոնային գիտելիքների կարևորությանը, բայց որպես հաղորդակցական իրադրության էական բաղկացուցիչ մշակութային գործոնը չի քննվում: Օրինակ՝ Լյուդվիգ Վիտգենշտեյնի «Philosophical Investigations» (1953թ.) ուսումնասիրությունը ներկայացնում է, թե ինչպես են մշակութային նորմերը դրսևորվում ներակայման միջոցով և հակառակը: Այս առումով Վիտգենշտեյնի գաղափարները կարևոր պատկերացումներ են տալիս այն մասին, թե ինչպես է ներակայումը գործում լեզվական իմաստի շրջանակներում հատկապես մշակութային գործոնով և միջմշակութային հաղորդակցության համատեքստով պայմանավորված: Աշխատանքն ավելի կշահեր, եթե գլուխներից մեկը նվիրված լիներ ներակայման դրսևորումներին միջմշակութային հաղորդակցության համատեքստում:

Միջմշակութային հաղորդակցության մեջ ներիմաստը դրսևորվում է իմաստային նուրբ և հաճախ անտեսանելի շերտերի միջոցով, որոնք առաջանում են մշակութային նորմերի, արժեքների և հաղորդակցման ոճերի տարբերություններից: Այդ ներակա իմաստները կարող են ներառել մշակութային, ոչ խոսքային միջոցներ, որոնք ընկալվում են մշակութային որևէ համատեքստում, բայց կարող են տարբեր կերպ մեկնաբանվել մեկ այլ մշակույթի ներկայացուցիչների կողմից: Օրինակ՝ այն, ինչ համարվում է քաղաքավարի, հումորային կամ տեղին մի մշակույթում, կարող է ներակա այլ իմաստ ունենալ մեկ այլ մշակույթում՝ հանգեցնելով թյուրիմացությունների կամ ավելի խորը մեկնաբանության անհրաժեշտության: Այդ ամենը անհրաժեշտություն է առաջացնում քննելու ոչ միայն տվյալ կոնկրետ լեզվի դրսևորման նրբերանգները,

այլև մշակութային շերտերը, որոնք ընկած են հաղորդակցական գործունեության հիմքում:

3. Ատենախոսության էջերում ներիմաստի առաջացման պատճառների և հանգամանքների քննության մեջ որպես խոսքը պատկերավոր դարձնելու միջոց է ներկայացվում «Այս անգամ սև խավիարը չօգնեց...» արտահայտության մեջ առկա թաքնված ներիմաստը: Ատենախոսն իրավացիորեն ընդգծում է, որ այդ «ներիմաստն ընկալելու համար օգնության են գալիս ֆոնային գիտելիքները, որի համար պետք է նախ իմանալ, թե ինչ է «խավիարային» դիվանագիտությունը, որը վերագրվում է Ադրբեջանին» (էջ 92): Սակայն այս և նմանատիպ օրինակները վառ ապացույց են այն բանի, որ այստեղ գործ ունենք ոչ թե զուտ խոսքի պատկերավորման միջոցի, այլ միջմշակութային համատեքստի հետ: Հետևաբար այս և նման օրինակները պետք էր քննել առանձին ենթաբաժնում՝ ներակայումը ներկայացնելով որպես միջմշակութային երկխոսության հիմնական գործոն:


4. Ատենախոսը գերազանցապես հիմնվել է ուսական աղբյուրների վրա, բայց անգլալեզու շատ ավելի մեծ ու ընդգրկուն քննություններ կան: Կուզենայինք՝ հետազայում աշխատանքը հարստացվեր նաև այդ աղբյուրներով, անդրադարձ լիներ քննադատական այնպիսի տեսություններին և նոր մոտեցումներին, ինչպիսին է, օրինակ, Գրայսի տեսության քննադատներից Ուեյն Դևիսի հետազոտությունը՝ *"Implicature: Intention, Convention, and Principle in the Failure of Gricean Theory"* (1998), որն ընդգծում է Գրայսի տեսության որոշ սահմանափակումները: Դևիսը հատկապես շեշտադրում է այն գաղափարը, որ ներակա իմաստները տարբեր համատեքստերում տարբեր կերպ են դրսևորվում, հետևաբար այն պետք է քննել ավելի լայն շրջանակում՝ որպես ոչ միայն խոսքային և լեզվական դրսևորումներ, այլև որպես հասարակական պատկերացումների արտահայտության միջոցներ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ վերը նշված առաջարկություններն ու դիտարկումները աշխատանքն ավելի կատարյալ տեսնելու ցանկություններ են, հեշտությամբ շտկելի իրողություններ և չեն ազդում աշխատանքի ընդհանուր դրական որակի վրա:

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ լեզվական նյութի վերլուծությունը և դրանից թխող եզրակացությունները արդյունավետորեն լուծում են ատենախոսության մեջ նախանշված հետազոտական խնդիրները: Եզրակացությունները հիմնավորված են և թխում են նյութի քննությունից: Ատենախոսության թեմայով տպագրված թվով վեց հոդվածները տպագրվել են ՀՀ ԲՈԿ ընդունելի պարբերականներում, ատենախոսության հիմնական դրույթների ընդգրկման ամբողջականությունը պահպանված է, հոդվածներում արտացոլված նյութը վերաբերում է ատենախոսության երեք գլուխներին:

Այսպիսով՝ Միրանուշ Էդուարդի Կեսոյանի թեկնածուական ատենախոսությունը թեմատիկ առումով նոր մոտեցում է ներկայացնում, գիտական կարևոր արժեք ունի: Այն արժանի է բարձր գնահատականի, իր տեսական և կիրառական նշանակությամբ համապատասխանում է Ժ 02.01 «Հայոց լեզու» մասնագիտությանը և «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ/ 8-րդ կետի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, ուստի նրա հեղինակին կարելի է շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝
բան.գիտ.թեկնածու, դոցենտ



Մ. Սարգսյան

Ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտքարտուղար՝



Գ. Մխիթարյան

15.10.2024